ՍԱՂՄՈՍ 92

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ բարության համար փառաբանություն <u>MT ներածություն</u> Շաբաթ օրվա Սաղմոս ու երգ	Փառաբանություն ՏԻՐՈՋԸ Իր սիրո և հավատարմության համար	Անձնական թշնամիներից ազատվելուց հետո գոհություն	Փառաբանության երգ	Արդարի երգը
92:1-4	92:1-4	92:1-4	92:1-4	92:1-3
				92:4-6
92:5-9	92:5-7	92:5-9	92:5-8	
				92:7-8
	92:8-9		92:9-11	92:9-11
92:10-15	92:10-11	92:10-11		
	92:12-15	92:12-15	92:12-15	92:12-13
				92:14-15

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը գործածում է գյուղատնտեսական աճման նկարագրություն, ինչպես Սաղմ. 1:3, որպեսզի նկարագրի մարդու հոգևոր կյանքը՝
1. բացասական՝
   ա. ամբարիշտները խոտի պես բուսնում են, Սաղմ. 92:7
   բ. անօրենություն գործողները ծաղկում են, Սաղմ. 92:7
2. դրական՝

ա. արդարը ծաղկելու է, Սաղմ. 92:12
բ. նա աճելու է, Սաղմ. 92:12
գ. տնկված են ՏԻՐՈՋ տան մեջ, Սաղմ. 92:13
դ. մեր Աստծո տան մեջ են ծաղկելու, Սաղմ. 92:13
ե. ծերության ժամանակ էլ պտղաբեր են լինելու, Սաղմ. 92:14
զ. պարարտ ու դալար են մնալու, Սաղմ. 92:14

Բ. Առկա է պարբերաբար פ տառով (հնչյունային խաղ) սկսվող բառերի կրկնվող կիրառություն:
1. բուսնել (բառացի՝ «բողբոջել»), Սաղմ. 92:7 – BDB 827, KB 965
2. ծաղկել, Սաղմ. 92:7 – BDB 821, KB 950
3. ցրվել (բառացի՝ «առանձնանալ»), Սաղմ. 92:9 – BDB 825, KB 962
4. անօրենություն գործողներ, Սաղմ. 92:9 – BDB 821, KB 950
5. ծաղկել (բառացի՝ «բողբոջել»), Սաղմ. 92:12 – BDB նույնը ինչ #1
6. ծաղկել (բառացի՝ «բողբոջել»), Սաղմ. 92:13 – նույնը ինչ #1

Գ. Այստեղ չկան աղոթքի խնդրանքներ (այսինքն՝ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ, ԸՂՁԱԿԱՆՆԵՐ), այլ միայն Աստծո գործերի մասին հայտարարություններ:
1. Նրա բնավորությունը, Սաղմ. 92:2,15
2. Նրա գործերը
ա. արարչագործությունը, Սաղմ. 92:5
բ. արդարադատությունը, Սաղմ. 92:6-9
գ. օրհնությունները, Սաղմ. 92:10-14

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 92:1-4
[1]Բարի է ՏԻՐՈՋԻՑ գոհանալը
Ու Քո անվանը սաղմոս ասելը, ո՛վ Բարձրյալ,
[2]Առավոտները Քո ողորմությունը,
Իսկ գիշերները Քո հավատարմությունը երգելը՝
[3]Տասնալար նվագարանով ու տավղով
Եվ օրհնության ձայնով:
[4]Քանի որ Դու, ՏԵ՛Ր, Քո գործով ուրախացրիր ինձ.
Քո ձեռքերի գործերով եմ ցնծալու:

92:1-4 Այս պարբերությունը շեշտադրում է փառաբանությունը: Ուշադրություն դարձրե՛ք երաժշտությանը պարբերաբար անդրադառնող համարներին: Սա նկատի ունի ինչ-որ տոնական օր տաճարում երկրպագությունը:
1. ԲԱՅԵՐ
ա. գոհանալը, Սաղմ. 92:1 – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՁՄՈՒԹՅՈՒՆ
բ. փառաբանություն/սաղմոս երգելը, Սաղմ. 92:1 – BDB 274, KB 273, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՁ-ՄՈՒԹՅՈՒՆ
գ. ուրախացրիր, Սաղմ. 92:4 – BDB 970, KB 1333, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
դ. ցնծալ, Սաղմ. 92:4 – BDB 943, KB 1247, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
2. երաժշտական գործիքներ (ա.-ն հնարավոր է որոշի բ.-ն և հետևաբար վերաբերի միայն երկու գործիքի, տես՝ Սաղմ. 33:2, 144:9)
ա. տասնալար նվագարան, Սաղմ. 92:3 – BDB 797
բ. տավիղ, Սաղմ. 92:3 – BDB 614 II

գ. քնար, Սաղմ.92:3 – BDB 490 (բ.և գ.երկուսն էլ նշվում են Սաղմ.57:8-ում)

92:1 «Քո անվանը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

❖ **«Բարձրյալը»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Բ.

92:2 Այս Սաղմոսը սկսում է երեք ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ բայերով՝

1. զոհանալ – BDB 392, KB 389, *Hiphil*
2. փառաբանություն երգել – BDB 274, KB 273, *Piel*
3. հռչակել – BDB 616, KB 665, *Hiphil*

Նկատե՛ք, որ 3-րդ կետը՝ «հռչակել», նաև փակում է (*inclusio*) Սաղմոսը Սաղմ.92:15-ում: Այս հռչակումը բովանդակում է՝

1. ՅԱՀՎԵԻ բարեգթությունը, Սաղմ.92:2 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ /*hesed*/)
2. ՅԱՀՎԵԻ հավատարմությունը, Սաղմ.92:2 (տես՝ Սաղմ.33:4, 143:1, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ):
3. ՅԱՀՎԵԻ արդարությունը, Սաղմ.92:15 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ)
4. ՅԱՀԵՎԻ հաստատ և զորավոր լինելը (բառացի՝ «Նա իմ Վեմն է»), Սաղմ.92:15
5. ՅԱՀՎԵԻ կատարյալ բնավորությունը (բառացի՝ «անարդարություն չկա Նրա մեջ», տես՝ Հռոմ.9:11, Հակոբոս 1:17), Սաղմ.92:15:

❖ **«առավոտները... գիշերները»** Սրանք զուգահեռներ են և դարձվածքային են «մշտապես» բառի համար: Մյուս տարբերակն այն է, որ այս խոսքը մատնանշում է ամենօրյա զոհերի ժամանակները (այսինքն՝ 9:00-ին, 15:00-ին՝ տաճարում և հետևաբար ունի պատարագային շեշտադրություն):

92:4 «Քո գործերով» Սաղմ.92:4-ի բանաստեղծական երկու տողերը կրկնում են այս միտքը (այսինքն՝ Սաղմոս 1, «Երկու ճանապարհները», տես՝ 2 Օրինաց 30:15, 19): ՅԱՀՎԵԻ գործը՝

1. ամբարշտի կործանումն է՝ Սաղմ.92:5-9 (հտկպ՝ Սաղմ.92:7)
2. արդարի օրհնությունը՝ Սաղմ.92:10-15:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 92:5-9

5Որքա՜ն մեծ են Քո գործերը, Տե՛ր,
Շատ խորն են Քո խորհուրդները:
6Անզգամ մարդը չգիտի,
Ու անմիտը չի հասկանա սա՝
7Ամբարիշտների՝ խոտի պես բուսնելը
Ու բոլոր անօրենություն գործողների ծաղկելը
Նրանց դեպի հավիտենական կորուստ են տանում:
8Բայց Դու, ո՛վ ՏԵՐ, հավիտյան բարձր ես;
9Քանի որ, ահա, Քո թշնամիները,
Ահա Քո թշնամիները կորչելու են,
Ցիրուցան են լինելու բոլոր նրանք,
Ովքեր անօրենություն են գործում,

92:5-9 Այս պարբերությունը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ գործունեության վրա, որն ուղղված է՝

1. անզգամ մարդու հանդեպ, Սաղմ.92:6ա – BDB 35 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ BDB 129
2. հիմար մարդու հանդեպ, Սաղմ.92:6բ – BDB 493, երկուսն էլ՝ #1 և #2 կիրառվում են Սաղմ. 49:10, 94:8-ում
3. ամբարշտի հանդեպ, Սաղմ.92:7ա – BDB 957

4. անօրենություն գործողի հանդեպ, Սաղմ. 92:7բ
5. ՅԱՀՎԵԻ թշնամիները, Սաղմ. 92:9 (երկու անգամ) – BDB 33, *Qal* ԴԵՐԲԱՑ

Նրանք բնութագրվում են որպես՝

1. գիտություն չունեցող
2. այս մեղավոր աշխարհում ծաղկողներ
3. վերջնականապես և հավիտյան կործանվողներ (հենց սա է, որ անզգամն ու հիմարը չեն հասկանում)

ՅԱՀՎԵՆ բնութագրվում է որպես՝

1. մեծ գործեր անող, տես՝ Սաղմ. 40:5, 111:2
2. խորը մտքերով (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ BDB 770, KB 847 միայն այստեղ)
3. հավիտյան բարձրում է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*'olam*))
4. Սաղմ. 92:15 փառաբանություն է Իր հավատարիմ հետևորդների հանդեպ ՅԱՀՎԵԻ ցուցաբերած հավատարիմ գործերի համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 92:10-15

[10]Բայց իմ եղջյուրը ռնգեղջյուրի եղջյուրի պես բարձրացնելու ես:
Ես նոր յուղով եմ օծվելու:
[11]Իմ աչքերը նայելու են իմ թշնամիների վրա,
Իմ ականջները լսելու են իմ դեմ ելած չարագործների մասին:
[12]Արդարը ծաղկելու է արմավենու պես,
Աճելու է Լիբանանի մայրու պես:
[13]ՏԻՐՈՋ տան մեջ տնկվածները
Մեր Աստծո գավիթների մեջ են ծաղկելու,
[14]Ծերության ժամանակ էլ պտղաբեր են լինելու,
Պարարտ ու դալար են մնալու,
[15]Որպեսզի պատմեն, թե ՏԵՐՆ ուղիղ է:
Նա իմ Վեմն, ու անարդարություն չկա Նրա մեջ:

92:10-15 Այս պարբերությունը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ գործողությունների վրա՝ արդարի հանդեպ (Սաղմ. 92:12): Ուշադրություն դարձրե՛ք Նրա գործողություններին նրանց համար՝

1. բարձրացնում է նրա եղջյուրը (տես՝ Սաղմ. 75:10, 112:9)
2. օծում է թարմ յուղով (տես՝ Սաղմ. 23:5, 45:7, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ)
3. ծաղկելու են արմավենու պես (տես՝ Սաղմ. 1:3, Երեմ. 17:8)
4. աճելու են մայրու պես (տես՝ Ովսեա 14:5-6)
5. տնկվելու են ՅԱՀՎԵԻ տաճարում (տես՝ Սաղմ. 52:8)
6. ծաղկելու են ՅԱՀՎԵԻ սրահներում (տես՝ Սաղմ. 65:4, 84:10, 135:2)
7. ծերության օրերում էլ պտուղ են տալու
8. պարարտ ու դալար են լինելու
9. ճանաչելու են, որ ՅԱՀՎԵՆ է իրենց վեմը և Նա կատարյալ արդար է (տես՝ Սաղմ. 18:2, 94:22)

Ռաբբիներն այս պարբերությունը մեկնում են որպես անդրադարձ վախճանաբանական միջավայրի (տես՝ Ռոշ Հաշ, 31ա. Ռաշի): Հնարավոր է ճիշտ է (տես՝ Սաղմ. 92:7գ):

92:10 «ռնգեղջյուր» LXX տարբերակն այս տերմինը BDB 910, ראם թարգմանել է որպես «միաեղջյուր», որին հետևել է KJV տարբերակը: NKJV փոխում է այն որպես «վայրի եզ»:

Այս բառն անհայտ է (KB 1163):

1. վայրի ցուլ (աքքադերեն արմատ)
2. վայրի գոմեշ
3. սպիտակ այծեղջյուր (արաբերեն արմատը)
4. օրիքս (Թարգում)

5. ռնգեղջյուր (Վուլգատտա)

❖

NASB, NKJV	**«ես օծվել եմ»**
NRSV	**«դու իմ վրա թափեցիր»**
TEV	**«դու ինձ օրհնեցիր»**
NJB	**«դու օծում ես ինձ»**
JPSOA	**«ես ներծծված եմ»**
LXX	**«իմ ծեր տարիքում թանձր յուղով»**
Peshitta	**«ես օծվելու եմ»**

ԲԱՅԸ (BDB 117, KB 134, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) սովորաբար նշանակում է «խառնել» կամ «շփոթել». միայն այստեղ է օծություն նշանակում: Այս նշանակությունը հավանաբար բխել է արաբերեն «խոնավեցնել» արմատից: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 363) տալիս է «ես խոնավացած եմ» խոսքին "B" գնահատական (որոշ չափով կասկածելի):

92:11 Եթե այս Սաղմոսն արտացոլում է Իսրայելի Թագավորի փառաբանությունը (LXX ասում է Դավիթը և «օծյալը», տես՝ Սաղմ.91:10բ), ապա այս համարը հնարավոր է վերաբերում է միապետությունը քանդելու դավադրության, որը բացահայտվեց:

92:13 «տնկված» Այս ԲԱՅԸ (BDB 1060, KB 1570, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նշանակում է «պատվաստված», իսկ ԿՐԱՎՈՐԱԿԱՆԸ ակնարկում է՝ Աստծու կողմից (տես՝ Սաղմ.1:3, Երեմ. 17:8, Եզեկ.17:10, 22, 19:10, 13, Ովսեա 9:13): Հավատարիմ հետևորդները սկսում են որպես անհավատարիմներ, սակայն ողորմած Աստվածն ազդում է նրանց վրա:

❖ **«ՏԻՐՈՋ տան մեջ... Աստծո գավիթների մեջ»** Նկատե՛ք այն զուգահեռականությունը, որ կա ՅԱՀՎԵԻ և *Էլոհիմի* միջև (տես՝ Ծննդ.2:4):

Այս նկարագրությունը վերաբերում է տաճարի կանոնավոր պաշտամունքին (տես՝ Սաղմ.23:6, 27:5), լինի դա՝

1. ամեն օր,
2. ամեն շաբաթ,
3. թե տոնական օրերին

անհայտ է:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ՏՈՆԵՐԸ</u>

92:14 Սա հնարավոր է ակնարկ է Մովսեսի 120 տարվա ակտիվ ծառայությանը:

❖ **«Նրա մեջ անարդարություն չկա»** ՅԱՀՎԵՆ սուրբ է, առանց մեղքի, անաչառ, անփոփոխ (տես՝ 2 Մնաց.19:7, 2 Օր.32:4, Մաղ.3:6, Հռոմ.9:14, Եբր.13:8, Հակ.1:17):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրե՛ք Սաղմոս 92:2-ում առկա կարևորագույն աստվածաբանական թեման, որը բնութագրում է ՅԱՀՎԵԻ բնավորությունը՝
   ա. բարեգթությունը
   բ. հավատարմությունը
2. Սաղմոս 92:3-ում քանի՞ երաժշտական գործիք է թվարկվում, երկու, թե՞ երեք:
3. Որո՞նք են ՅԱՀՎԵԻ ձեռքերի «գործերը», որոնք նշվում են Սաղմ. 92:4բ և 5ա-ում:
4. Ինչպե՞ս են Սաղմ. 92:7 և 8 աստվածաբանորեն կապված:
5. Ի՞նչ նկատի ունի Սաղմոս 92:11:
6. Ինչպե՞ս է Սաղմ. 92:12-14 կապված Սաղմոս 1-ի հետ: